**Արձանագրություն N 3**

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար <<Շինանյութերի>> ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/7-01» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «25» նոյեմբերի 2016թ.
ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*

**Կարեն Համբարձումյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ) Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար

*հանձնաժողովի անդամներ՝*

**Սարգիս Արմենակյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

**Կարեն Մելքոնյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

**Արման Ղուկասյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

**Աղավնի Բուդույան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար:

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Մարիամ Հայրապետյան** (Գնման Պատասխանատու/Մրցույթի համակարգող՝ ԳՊ/ՄՀՄ) ՀՀ դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ:

**1. Տեղեկատվություն՝ Հայտում արձանագրված անհամապատասխանությունները մասնակցի կողմից շտկելու վերաբերյալ.**

1.1 «ԷԿՈՄԻՔՍ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկել է իր հայտում արձանագրված անհամապատասխանությունները, հետևաբար նշված մասնակցի հայտը ևս գնահատվում է բավարար:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 2.Մասնակիցների առաջարկած գներն են՝

| Հ/Հ | Չափաբաժնի անվանումը | 1. «ԷԿՈՄԻՔՍ» ՍՊԸ | | | | | 2. «Էլիտս գրուպ» ՍՊԸ* | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Ինքնարժեք | Շահույթ | Առաջարկած գինը /առանց ԱԱՀ/ | ԱԱՀ | Առաջարկած գինը /ներառյալ ԱԱՀ/ | Ինքնարժեք | Շահույթ | Առաջարկած գինը /առանց ԱԱՀ/ | ԱԱՀ | Առաջարկած գինը /ներառյալ ԱԱՀ/ |
| 1 | Այլ զանազան շինարարական նյութեր | 649782 | 64978 | 714760 | 142952 | 857712 | 470780.95 | 23539.05 | 494320 | 98864 | 593184 |
| 2 | Ցուղաներկեր | 28773 | 2877 | 31650 | 6330 | 37980 | 20238.1 | 1011.9 | 21250 | 4250 | 25500 |
| 3 | ԴՍՊ | 378485 | 37848 | 416333 | 83267 | 499600 | – | – | – | – | – |

| Հ/Հ | Չափաբաժնի անվանումը | 3. «ՏԻՄԱ» ՓԲԸ | | | | | 4. Հովհաննես Մարտիրոսյան Ա/Ձ | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Ինքնարժեք | Շահույթ | Առաջարկած գինը /առանց ԱԱՀ/ | ԱԱՀ | Առաջարկած գինը /ներառյալ ԱԱՀ/ | Ինքնարժեք | Շահույթ | Առաջարկած գինը /առանց ԱԱՀ/ | ԱԱՀ | Առաջարկած գինը /ներառյալ ԱԱՀ/ |
| 1 | Այլ զանազան շինարարական նյութեր | 578549.63 | 36928.7 | 615478.33 | 123095.67 | 738574 | – | – | – | – | – |
| 2 | Ցուղաներկեր | – | – | – | – | – | – | – | – | – | – |
| 3 | ԴՍՊ | 300978.6 | 19211.4 | 320190 | 64038 | 384228 | 351000 | 39000 | 390000 | 0 | 390000 |

*«Էլիտս գրուպ» ՍՊԸ-ն ներկայացրել է հայտարարություն այն մասին, որ իր կողմից հայտով առաջարկվող 2-րդ չափաբաժնում նշված ապրանքը հանդիսանում է Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանք:

**3. Տեղեկատվություն՝ գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններ վարելու անհրաժեշտության վերաբերյալ.**

**3.1.1** Նկատի ունենալով, որ 3-րդ չափաբաժնի մասով մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները գերազանցել են սույն գնման մասով պատասխանատու ստորաբաժանման հաստատած գնման հայտով սահմանված կողմնորոշիչ առավելագույն գինը՝ անհրաժեշտություն է առաջանում ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարելու գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններ:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

**3.1.2** Հաշվի առնելով, որ «ԷԿՈՄԻՔՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնի առաջարկում 3-րդ չափաբաժնի մասով նշված ինքնարժեքի գումարն արդեն իսկ գերազանցում է այդ գնումը կատարելու համար սահմանված վերոնշյալ կողմնորոշիչ առավելագույն գինը և հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը՝ «ԷԿՈՄԻՔՍ» ՍՊԸ-ի հետ 3-րդ չափաբաժնի մասով գների նվազեցման շուրջ մաիժամանակյա բանակցություններ չեն վարվի:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

**4. Հանձնաժողովը որոշեց.**

Միաժամանակյա բանակցություններ վարելու հանգամանքով պայմանավորված՝ հանձնաժողովի նիստը կասեցնել և հաջորդ նիստը հրավիրել 2016թ. նոյեմբերի 30-ին՝ ժամը 15:00-ին՝ <<ՀՀ դատական դեպարտամենտ> ՊԿՀ-ի վարչական շենքում (Վ. Սարգսյան 5)՝ VI հարկի նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի՝

Նախագահ՝

Կարեն Համբարձումյան

Անդամներ՝

Սարգիս Արմենակյան

Կարեն Մելքոնյան

Արման Ղուկասյան

Աղավնի Բուդոյան

Քարտուղար՝

Մարիամ Հայրապետյան